ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, մաս Ա (արևմտյան ու հարավային աշխարհներ). *Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2001, 402 էջ:*

Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության ընդավառում ունեցած գիտական մեծ կարևորությամբ ու գաղափարական նշանակությամբ պայմանավորված՝ հայագիտությունն ի սկզբանե մեծ տեղ է տալիս Մեծ Հայքի վարչաքաղաքական համակարգի ուսումնասիրությանը: Դրա շնորհիվ Ղ. Ինճիճյանի, Ղ. Ալիշանի, Հ. Հյուբշմանի, Հ. Մարքվարթի, Ն. Ադոնցի, Հ. Տաշյանի, Ս. Երեմյանի, Թ. Հակոբյանի և այլ հետազոտողների ջանքերով այդ բնագավառում արձանագրվել են նշանակալից ձեռքբերումներ: Այդուհանդերձ, աղբյուրագիտական անբավարար հենքով, հայագիտության նախորդ շրջանի զարգացման մակարդակով և այլ գործոններով թելադրված՝ Հայաստանի վաղ ավատատիրության շրջանի վարչաքաղաքական բաժանման համակարգի հետ կապված բազմաթիվ հարցեր կամ թերի ու սխալ են լուսաբանվել կամ էլ շրջանցվել, ուստի և նորովի ու սպառիչ ուսումնասիրության կարիք են զգում: Այդ բացի էական լրացմանն է միտված գրախոսվող աշխատությունը, որը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի պատմական աշխարհագրության հեղինակավոր ու բեղուն հետազոտող Բ. Հարությունյանի երկար տարիների տքնաջան գիտական պրպտումների արդյունքն է:

Ներկայացվող ուսումնասիրությունն աշխատության առաջին մասն է և շարադրվել է հայկական և օտար բազմաթիվ ու բազմապիսի սկզբնաղբյուրների, ինչպես նաև տարաբնույթ ուսումնասիրությունների հիման վրա: Այն բաղկացած է ծավալուն ներածությունից և ութ գլուխներից, որոնք նվիրված են Մեծ Հայքի արևմտյան ու հարավային աշխարհներ Բարձր Հայքին, Ծովքին, Աղձնիքին, Տավրուբերանին, Մոկքին, Կորճայքին, Պարսկահայքին և Վասպուրականին:

Ներածության մեջ Բ. Հարությունյանը հիմնավորել է իր քննության առարկայի կարևորությունն ու փաստարկել Հայաստանի վարչաքաղաքական բաժանումների պատմության ուսումնասիրության արդիականությունը ոչ միայն հայագիտության, այլև՝ կովկասագիտության ու արևելագիտության համար առհասարակ: Ապա հեղինակն անդրադարձել է իր հետազոտության հիմքում ընկած սկզբնաղբյուրների համադիր քննությանն ու արժեվորմանը: Ինչպես և պետք էր սպասել, նա հատկապես մեծ տեղ է հատկացրել հայ պատմաաշխարհագրական մտքի բացառիկ հուշարձան «Աշխարհացույց»-ին: Պատմաքննական հյուսկեն վերլուծությունը Բ. Հարությունյանին բերել է այն համոզման, որ «Աշխարհացույց»-ը ոչ թե VII, այլ՝ V դ. իրողություն է, որի մեջ հետագայում ներմուծվել են նաև VI–VII դդ. եղելություններ և որ նրա հեղինակը Անանիա Շիրակացին չէ, այլ Մովսես Խորենացին: Որ իրոք «Աշխարհացույց»-ը պետք է թվագրել V դ., Բ. Հարությունյանին լիովին հաջողվել է ապացուցել, դրանով իսկ հարթելով հայագիտության մեջ այդ կոթողի ստեղծման ժամանակի շուրջ երկար տարիներ շարունակվող սուր բանավեճը: Ինչ վերաբերում է նրա հեղինակային պատկանելության վերաբերյալ Բ. Հարությունյանի առաջադրած վարկածին, թե այն Մովսես Խորենացու ստեղծագործությունն է, ապա նա խոստացել է այդ խնդիրը հանգամանալից քննել աշխատության Բ մասում:

Բ. Հարությունյանը ծավալուն անդրադարձել է նաև Մեծ Հայքի վաղ ավատատիրության շրջանի վարչաքաղաքական համակարգին նվիրված դրականության վերլուծությանը: Նա հավուր պատշաճի ցույց

է տվել խնդրո առարկա հիմնահարցի հետազոտման ասպարեզում այլ հեղինակների ներդրած մեծ ավանդը և հարցի մշակվածության աստիճանը:

Բուն աշխատությունը, հետազոտության շահերից ելնելով, ժամանակագրորեն ընդգրկում է սեպագրական շրջանից մինչև Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումներն ընդգրկող պատմաշրջանը: Պատմաաշխարհագրական բնույթ ունեցող համակողմանի քննության մեջ Բ. Հարությունյանն իրավացիորեն Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանումը դիտարկել է ոչ թե որպես քարացած, այլ զարգացող ու փոփոխվող մարմին: Դրանից ելնելով, հեղինակը հիմնախնդրի հետազոտությունը կատարել է ժամանակի ու տարածության մեջ՝ հատկապես «Աշխարհացույց»-ի և Պտղոմեոսի «Աշխարհագրության» հաղորդումների համադրությամբ: Ընդ որում, ցանկացած հարցի քննության ընթացքում նա ոչ միայն բարեխղճորեն նշել է այլ հետազոտողների ավանդը, այլև բանավիճելիս ցուցաբերել է հարգանք ընդդիմախոսի նկատմամբ և գիտական բարձր կուլտուրա:

Սկզբնաղբյուրների, հատկապես՝ «Աշխարհացույց»-ի, ընդարձակ ու համառոտ խմբագրությունների ձեռագրերի ընձեռած հնարավորությունների սահմաններում և հարցի շուրջ եղած դրականության համակողմանի ներառումով, հեղինակին հաջողվել է որակական նոր քայլ կատարել Մեծ Հայքի խնդրո առարկա ութ աշխարհների և դրանց բաղկացուցիչները կազմող գավառների մի առ մի տեղադրության ու սահմանների առավելագույնս որոշակիացման ասպարեզում: Հեղինակը համեմատական քննության մեթոդով մեծ աշխատանք է կատարել նաև գավառացանկերի ներքին օրինաչափությունների վերլուծության, ինչպես և գավառների քանակի ու անունների ուղիղ ձևերի ճշտման հարցում: Բացի այդ, անխտիր տվել է բոլոր գավառանունների տարընթերցումները և քննել դրանք:

Բ. Հարությունյանը բազմաթիվ սկզբնաղբյուրների օգտագործմամբ հանգամանորեն անդրադարձել է քննված աշխարհների ու դրանց մասերը կազմող գավառների՝ իբրև վարչական միավորների, ձևավորման պատճառներին, ժամանակին ու այլ հանգամանքներին՝ հաճախ հաջողությամբ վիճարկելով հայագիտության մեջ արմատացած այս կամ այն տեսակետը և կատարելով նոր, արդարացված ճշտումներ ու սրբագրումներ: Դրա վառ օրինակներից է Տավրուբերանի անվան և իբրև վարչաքաղաքական միավորի ձևավորման խնդրի հետ կապված հարցերի քննությունը: Հեղինակը ապացուցել է, որ Մեծ Հայքի աշխարհներն իբրև վարչաքաղաքական միավորներ ծնունդ են առել I դ. երկրորդ կեսին՝ Տրդատ I-ի օրոք, երբ պարթև Արշակունիների մի ճյուղը հաստատվեց հայոց գահին: Նա նաև ապացուցել է, որ Տրդատ I-ի վարչական վերակառուցումների շնորհիվ ձևավորված այդ վարչական բաժանումն արտացոլվել է Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ և Ագանթանդեղոսի «Պատմությունում» ըստ այդ երկերի հեղինակների ապրած ժամանակների կացության: Եզրակացրել է, որ «Աշխարհացույց»-ը հիմնականում ներկայացնում է III դ. կեսերի Մեծ Հայքի վարչական բաժանումը, որին ավելացվել են V դ. երկրորդ կեսի որոշ վարչական իրողություններ: Դրա ապացույցներից է Տոսպքի և Մարդպետականի տարածքների ընկալումն իբրև 428թ. հետո ձևավորված Վասպուրական աշխարհ:

Գրախոսվող աշխատության մեջ հաջողությամբ և խորությամբ բացահայտվել է երկրի ավատականացման, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների ու արտաքին գործոնների ազդեցությունը Մեծ Հայքի վարչական համակարգի փոփոխությունների վրա: Դրա վառ օրինակն են VI դ. վերջին – VII դ. սկզբին Մավրիկիոս կայսեր վարչական փոփոխություններն Արևմտյան Հայաստանում: Միառժամանակ, ի տարբերություն այլ հեղինակների, Բ. Հարությունյանը Ծոփքի օրինակով ցույց է տվել, որ «Աշխարհացույց»-ի հիմքում ընկած են ոչ թե Մավրիկիոսի վարչական վերափոխությունները, այլ՝ Մեծ Հայքի հին վարչական բաժանումը: Բացի այդ, Բ. Հարությունյանը համոզիչ ցույց է տվել, որ ըստ աշխարհների երկրի վարչական բաժանման համակարգն ավատատիրական հարաբերությունների խորացման և ապա հաղթա-

նակի հետևանքով աստիճանաբար իր տեղը սիջում է վարչական նոր համակարգին, որի հիմքում ընկած էր ավատատիրական տիրույթը: Նա ապացուցել է, որ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ընթացքում ներքին և արտաքին հանգամանքների պատճառով քայքայվում էր ոչ միայն ըստ աշխարհների վարչական բաժանման համակարգը, այլև տեղի էր ունենում գավառների ապախոշորացում և ի հայտ էին գալիս նոր գավառներ ու վարչական միավորներ: Իսկ երբ Հայաստանը հայտնվեց արաբական տիրապետության տակ, արաբները հիմնովին փոխեցին նրա վարչական բաժանումների համակարգը և ըստ աշխարհների վարչական բաժանումը գործնականում վերացավ: Հիմնախնդրի քննության ժամանակ հեղինակը տարբեր առիթներով անդրադարձել է որոշ հայ նախարարական տների պատմության մի շարք կարևոր դրվագների՝ կատարելով ուշագրավ եզրահանգումներ ու ճշգրտումներ և առաջ քաշելով համոզիչ վարկածներ հայոց պատմության մեջ նրանց խաղացած դերի, տիրույթների տեղադրության ու դրանց սահմանների որոշակիացման հարցերում: Այս առումով խիստ ուշագրավ է Արշամունիների տոհմի պատմական ասպարեզից հեռանալու շուրջ Բ. Հարությունյանի առաջադրած վարկածը: Բացի այդ, նա քննել է գործակալությունների ինստիտուտի հետ կապված առանձին խնդիրներ՝ հանգելով միանգամայն նոր եզրակացությունների:

Հետազոտության ընթացքում Բ. Հարությունյանը կատարել է աշխարհագրական, պատմագիտական, լեզվագիտական ու բանասիրական արդարացված բազմաթիվ տեղագրական, ժամանակագրական, ընագրագիտական ու այլ բնույթի ուշագրավ ճշտում-սրբագրումներ, առաջ քաշել հետաքրքիր վարկած-ենթադրություններ: Խիստ արժեքավոր է հեղինակի սրամիտ կռահում-եզրահանգումը Մեծ Հայքի թագավորության III դ. վերջերի քաղաքական անցքերի և անդրտիգրիսյան հինգ երկրամասերի՝ Անգեղտան, Ծոփքի, Աղձնիքի, Կորդուքի ու Ծավդեքի այդ ժամանակվա վարչաքաղաքական իրավիճակի և պատկանելության վերաբերյալ: Նա նաև իր ավանդն է բերել որոշ սկզբնաղբյուրների մի շարք հատվածների քննական բնագրերի վերականգնման խիստ շնորհակալ գործում: Գրախոսվող աշխատության հեղինակը ուսումնասիրության ընթացքում այս կամ այն տեղանվան վայրը որոշելիս, իբրև կանոն, պատմական անդրադարձումներ է կատարում և սկզբնաղբյուրներում տվյալ տեղանվանը վերաբերող տեղեկությունները սպառիչ օգտագործելով, շատ դեպքերում ճշտում է նկարագրվող պատմական դեպքերի ժամանակագրությունն ու ընթացքը: Բ. Հարությունյանի առաջարկած տեղագրական ճշգրտումներից հատկապես նշելի են երկուսը: Դրանցից առաջինը Տիգրանակերտի տեղադրությունն է: Բ. Հարությունյանը նախ հիմնավոր մերժել է Նփրկերտ-Ֆարկին-Սիլվանի հետ հայոց նշանավոր մայրաքաղաքի նույնացումը, ինչը մինչև այսօր էլ համառորեն շրջանառվում է հայագիտության մեջ: Ապա նա ապացուցել է, որ պատմական Նիկեփորիոն այժմյան Խարզան գետն է, որի աջ ափին բարձրացող լեռնակի շրջակայքում պետք է փնտրել Տիգրանակերտը: Առաջարկված երկրորդ կարևոր տեղադրությունը վերաբերում է մ.թ.ա. VI դ. Հայաստանի վարչական բաժանմանը: Հիմնովին մերժելով հայագիտության մեջ տիրապետող տեսակետը Բ. Հարությունյանը ապացուցել է, որ Աքեմենյան XVIII սատրապությունն ընդգրկել է ոչ թե Արևելյան Հայաստանը, այլ՝ նրանից հյուսիս ընկած շրջանները:

Հիմնահարցի համապարփակ քննությամբ թելադրված գրախոսվող աշխատության մեջ զգալի ուշադրություն է դարձվել ինչպես հայագոյացման ոլորտ ներգրավված մի շարք ցեղերի, այնպես էլ հայկական ցեղերի հարևանությամբ ապրող որոշ ոչ հայկական ցեղերի պատմությանը և ժամանակի հայոց պատմության մեջ դրանց խաղացած դերին:

Հեղինակի ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել են նրա իսկ կազմած և գրքին կցված պատմաաշխարհագրական մանրակրկիտ քարտեզում:

Այսպիսով, գրախոսվող աշխատության գիտական արժեքն անուրանալի է: Հեղինակը մեծ հաջողությամբ է կատարել իր առջև

դրված խնդիրը, էապես լրացնելով Մեծ Հայքի թագավորության վաղ ավատատիրական շրջանի վարչաքաղաքական բաժանման համակարգի քննության հետ կապված շատ բացեր: Դրա հետ մեկտեղ, Բ. Հարությունյանի գիտական պրպտումների արգասիքը նաև քաղաքական կարևոր արժեք ունի, քանի որ պատմության թուրք-ադրբեջանական և վրացական կեղծարարները հետապնդելով հեռուն գնացող քաղաքական նպատակներ բոլոր միջոցներով համառորեն խեղաթյուրում են հայոց պատմությունը մերժելով հայկական հին պետականության անգամ գոյությունը: Հետևաբար, լավ կլինի, եթե հեղինակը հնարավորինս շուտ ընթերցողի սեղանին դնի աշխատության նաև Բ մասը, որը նվիրված է լինելու Մեծ Հայքի մնացած յոթ աշխարհների համապատասխան քննությանը: Ճիշտ կլինի, եթե նրանում հեղինակը հնարավորինս խուսափի նկատվող որոշ, թեկուզև պարտագրված, կրկնություններից, որոնք առկա են աշխատության գրախոսվող մասում:

ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ